նշանաւոր տաղանդն անգամ անկարող է մեծ արդիւնք տալ լեզուի մշակութեան գործում։ Ժողովրդական բարբառները անսպառ աղբիւր են բանաստեղծի համար լեզուն հարստացնելու. նա ոչ միայն բառեր, դարձուածներ կ'առնի իւր լեզուն ճոխացնելու համար, այլ և խորասուզուելով կենդանի բարբառի մէջ՝ նորա ոգու համաձայն ինքն էլ կըստեղծէ նոր-նոր բառեր ու դարձուածներ, նորա գրչի տակ լեզուն կըստանայ իւր ճկունութիւնն ու սահունութիւնը [1])։ Բայց լեզուն իւր զարգացման ճանապարհին թռիչքներ չէ սիրում, նա աստիճանաբար որոշ օրէնքների հիման վերայ է զարգանում, ուրեմն և պէտք է հոգալ այն հանգամանքների մասին, որոնք լեզուի զարգացման պայմաններն են կազմում։ Առաջին և հիմնաւոր պայմանը ժողովրդական բարբառների ուսումնասիրութիւնն է. ժողովրդական բառերի և դարձուածների բառարանը մեր լեզուի զարգացման էական պահանջներից մէկն է։

Լեզուն զարգանում է և մի այլ ճանապարհով՝ լեզուաբանական գիտութեամբ։ Բարբառների ուսումնասիրութիւնը լեզուաբանական տեսակէտից մեծ նշանակութիւն ունի գրական լեզուի քերականութիւնը կանոնաւորելու համար. բարբառները իրենց քերականական ձևերով և կանոններով աւելի հաստատուն են և միջոց են ըմբռնելու գրական լեզուի ոգին։ Վերջապէս համեմատական լեզուաբանութեամբ պարապողը այստեղ առատ նիւթ կարող է գտնել համեմատութեան համար, աւելի ակներև փաստեր լեզուի փոփոխութեան օրէնքները բացատրելու համար, ճշտիւ որոշելու հայոց լեզուի արժէքը Հընդ-Եւրոպական լեզուների մէջ։

Զմոռանանք յիշել բանահիւսութեան նշանակութիւնը և տաղաչափութեան համար. ուսումնասիրելով մեր ժողովրդական երգերի տաղաչափութիւնը, գուցէ կը յաջողուի պարզել մեր տաղաչափութեան կանոնները։ Տաղաչափութիւնը մի շրջանակ է, որի մէջ անփոփ և անփոփոխ են մնում ժողովրդական քերդուածները, ուրեմն և ժողովելով զանազան գաւառների վիպական, կրօնական և

---

[1]) Патканов-ի Изслѣд. о діалект. арм. яз. և Коршъ I.